ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/370 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	Վենժոու Խինգջաո փլեյգրաունդ ԿՈ ԼԹԴ	Ճոճանակի /պտուտակ/ արտաքին չափսերն են՝ երկարությունը՝ առնվազն 1410մմ, լայնությունը՝ առնվազն 1410մմ, բարձրությունը՝ առնվազն 698մմ՝ ±20մմ թույլատրելի շեղմամբ: Պտուտակը նախատեսված է մանկական խաղային և սպորտային հարթակներում տեղադրման համար: Կառուցվածքային առումով այն բաղկացած է մետաղական հիմքից՝ պտտման հանգույցով, HDPE պլաստիկից պատրաստված երկու հավաքովի նստատեղերից: Կոնստրուկցիայի մետաղական տարրերը ներկված են պոլիմերային փոշեներկով՝ թխման մեթոդով, ինչը ապահովում է ծածկույթի բարձր դիմադրություն կլիմայական ազդեցությունների նկատմամբ և արտադրանքի էսթետիկ տեսքը: Բոլոր ամրակցման տարրերը պատրաստված են ցինկապատ մետաղից: Դուրս ցցված ամրակցման տարրերը ծածկված են պոլիէթիլենային դեկորատիվ խցաններով, իսկ խողովակների ծայրերը՝ պլաստիկ խցաններով: Կարուսելի տեղադրումն իրականացվում է հենասյուների, հողի մեջ ամրացվող հենակների բետոնացման կամ խարիսխների միջոցով: Մատակարարման հավաքածուն ներառում է չորս խարիսխային հեղույս, մեկ հավաքված կենտրոնական առանցք, մեկ հարթակ, մեկ բռնաձող և երկու նստատեղ: Հավաքված կենտրոնական առանցքը իրենից ներկայացնում է հավաքովի կառուցվածք՝ ներսում տեղադրված երեք առանցքակալներով՝ մեկ 80210Н առանցքակալ՝ համաձայն ГОСТ 7872-89-ի և

		երկու 80210 առանցքակալ՝ համաձայն ГОСТ 7242-81-ի: Հավաքված կենտրոնական առանցքը ապահովում է դրա վրա տեղադրված նստատեղերով հարթակի պտույտը: Պտտման հանգույցը բաղկացած է պատյանից, որը պատրաստված է առնվազն 108մմ տրամագծով, առնվազն 3մմ պատի հաստությամբ և առնվազն 85մմ երկարությամբ խողովակից: Պատյանին եռակցված են վերին և ստորին կափարիչները, ինչպես նաև առնվազն 6մմ հաստությամբ և առնվազն 220մմ տրամագծով թերթային մետաղից պատրաստված կցաշուրթը: Պտտման հանգույցը միացված է կենտրոնական առանցքին: Կենտրոնական առանցքը բաղկացած է կենտրոնական լիսեռից և հենակից: Հարթակը պատրաստված է առնվազն 30մմ հաստությամբ խոնավակայուն լամինացված նրբատախտակից: Հարթակի ամրացումը հավաքված կենտրոնական առանցքին իրականացվում է ութ պարուրակային միացումների միջոցով: Նստատեղերը տեղադրվում են հարթակի վրա և ամրացվում պարուրակային միացումների միջոցով: Յուրաքանչյուր նստատեղ ունի չորս հենասյուն: Բռնաձողը պատրաստված է առնվազն 57մմ տրամագծով և առնվազն 2,5մմ պատի հաստությամբ մետաղական խողովակից: Բռնաձողի վերին մասին եռակցված են ճառագայթները և օղակը: Ճառագայթները պատրաստված են առնվազն 21,3մմ տրամագծով, առնվազն 2,8մմ պատի հաստությամբ և առնվազն 253մմ երկարությամբ խողովակից: Օղակը պատրաստված է առնվազն 25մմ տրամագծով, 1,5մմ պատի հաստությամբ և առնվազն 1862մմ բացված երկարությամբ խողովակից: Նստատեղը իրենից ներկայացնում է եռակցված կառուցվածք, որը պատրաստված է առնվազն 33,5մմ տրամագծով և առնվազն 2,8մմ պատի հաստությամբ մետաղական խողովակից: Եռակցված մետաղական կառուցվածքի վրա տեղադրվում է առնվազն 19մմ հաստությամբ HDPE պլաստիկից նստատեղ: Նստատեղի հենասյուները տեղադրվում են հարթակի հատուկ անցքերի մեջ և ամրացվում պարուրակային միացումների միջոցով: Կառուցվածքի ամրությունն ու կայունությունը բարձրացնելու նպատակով յուրաքանչյուր նստատեղի կենտրոնական մասի տակ տեղադրվում են երկու լրացուցիչ ուղղահայաց հենասյուներ, որոնք ամրացվում են պարուրակային միացումների միջոցով: Այսպիսով, յուրաքանչյուր նստատեղի տակ նախատեսված է ընդհանուր առմամբ չորս հենասյուն: Մատակարարման հավաքածուում ներառված խարիսխային հեղույսները համապատասխանում են ГОСТ 24379.1-2012-ի պահանջներին կամ M16×500 մմ-ից ոչ պակաս բնութագրերով: Տրվում է առնվազն 12 ամսվա երաշխիք: Տեղադրումն իրականացվում է մատակարարի կողմից: Տեղադրումն սկսելուց առաջ պետք է ներկայացվեն արտադրողի

		բնօրինակ կնիքով անվտանգության և համապատասխանության հավաստագրերը (սերտիֆիկատները)։ 1.Գնման գինը ներառում է ապրանքների ձեռքբերումը կամ արտադրությունը, տեղափոխումը, տեղազննումը, չափագրումը, տեղադրման աշխատանքները, հիմքերը, խարիսխները, բետոնապատումը, հավաքակցումը, ռետինե ծածկույթի իրականացումը, փորձարկումը, վերջնական չափագրումը, փաստաթղթավորումը, մաքրումը և շահագործման հանձնումը։ 2.Մինչև մատակարարումը կատարվում են տեղազննում և փաստացի չափագրում, իսկ տեղադրման սխեմաները, հիմքերի հանգույցներն ու գունային լուծումները համաձայնեցվում են գնորդի հետ։ 3.Սահմանային չափերից մինչև ±10% շեղումը թույլատրվում է, եթե պահպանվում են սարքերի ֆունկցիաները, անվտանգությունը, որակը և տեղավորվողությունը։ 4.Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված և առանց վերականգնված բաղադրիչների։ 5.Սարքերը պետք է համապատասխանեն միջազգային ստանդարտներին և ունենան համապատասխանության հավաստագրեր։ 6.Խաղասարքերի բոլոր հիմնական մետաղական, պոլիմերային և փայտյա տարրերը պետք է արտադրված լինեն գործարանային պայմաններում։ 7.Տեղում թույլատրվում է միայն հավաքման, տեղադրման և հիմքերին ամրացման աշխատանքների իրականացումը՝ արտադրողի տեխնիկական հրահանգներին համապատասխան։ 8.Մատակարարը պարտավոր է իրականացնել՝ * տեղափոխումը, * բեռնաթափումը, * հավաքումը, *բետոնապատ հիմքերի և ամրացումների իրականացումը, * ամբողջական տեղադրումը, * անվտանգության ստուգումը, * շահագործման հանձնում։ 9.Մատակարարը պարտավոր է երաշխավորել պահեստամասերի և սպասարկման հնարավորությունը երաշխիքային ժամկետի ամբողջ ընթացքում։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/370 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
5		